

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԹՈՒՋՈՒՆՆԵՐԻ ԱՐԶԵՍՏԱԿԱՆ
ՃՏԱՀԱՆՄԱՆ (ԻՆԿՈՒԲԱՑԻԱՅԻ) ՅԵՎ
ՃՏԵՐԻ ԱՃԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

636.5

Հ-99

0 1 OCT 2010

Հ. Խ. Ս. Հ. ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՋՈՒԹՅՈՒՆ


636-5 սր
Հ-99

Հ Ր Ա Հ Ա Ն Պ

ԹՈՋՈՒՆՆԵՐԻ ԱՐԶԵՍՏԱԿԱՆ ՀՏԱՀԱՆ-
ՄԱՆ (ԻՆԿՈՒԲԱՑԻԱՅԻ) ՅԵՎ ՀՏԵՐԻ
ԱՃԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հ. Խ. Ս. Հ. ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1940



3240
40

Կազմեց և քաղցմանեց Գ. ՅԵԴԻԳԱՐՅԱՆ
Պատ. խմբագիր՝ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Տեխ. խմբագիր՝ Հ. ԱՅՎԱԶՅԱՆ

Պատվեր № 610, տիրաժ՝ 1-000

ՎՅ 705

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՄՀ ԺԿԽ-ԻՆ ԿԻՑ ԹԵՐԹԵՐԻ
ՅԵՎ ԱՄՍԱԳՐԵՐԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ

ԻՆԿՈՒԲԱՑԻԱ-ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՃՏԱՀԱՆՈՒՄ

Գոյութիւն ունի ճտահանման յերկու յեղանակ՝ բնական, յերբ թուխսը ինքն է տաքացնում ձվերը, և արհեստական ճտահանում, վորը կատարվում է ինկուբատոր կոչվող մեքենայի միջոցով:

Թռչնաբուծական խոշոր տնտեսութիւններում թռչունների գլխաքանակն ավելացնելու կամ բտման տակ դնելու (մսացվի համար), անհրաժեշտ է ունենալ հազարավոր գլուխ մատղաշ թռչուն: Այսքան մեծ քանակով թռչուն հնարավոր է ստանալ մի միայն ինկուբատորի միջոցով: Գործին քիչ տեղյակ մարդիկ մինչև որս ել պնդում են, վոր ինկուբատորից ստացված ճուտերը լինում են նուրբ և թույլ, քան թե բնական թռչունով հանած ճտերը: Նման պնդումները և դատողութիւնները զուրկ են վորեւէ հիմնավորումից և ձվերի ինկուբացիան կանոնավոր անցկացնելու դեպքում, ստացվում է նույն արդիւնքը, ինչ վոր բնական ճտահանման դեպքում:

Գոյութիւն ունեն շատ տիպի և տեսակի ինկուբատորներ և այժմս չենք կանգ առնում նկարագրելու ինկուբատորների կառուցվածքը, այլ նպատակ ենք դրել, տալ համառոտակի այն հիմնական անհրաժեշտ պայմանները, վորպիսին պետք է իմանա ինկուբատորի վրա անխառնող յուրաքանչյուր կոլտնտեսական:

վորպեսզի ինկուբատորից լավ ճտեք ստանալ, պետք է ստեղծել ինկուբատորում բնական ճտահանման հետեւյալ պայմանները՝

1. Ձվի վորակը.

2. Ինկուբատորի վենտիլյացիան (շենքի ոգափոխություն).

3. Ինկուբատորը տեղավորված շենքի ջերմաստիճանը.

4. Մեքենայի — ինկուբատորի ներսի ջերմաստիճանը.

5. Ինկուբատորի վենտիլյացիան և խոնավությունը

6. Ձվերի շուռ տալը.

7. Ձվերը ժամանակին կոնտրոլ ստուգման լենթարկելը (միրած):

Այժմ մի քանի խոսք վերոհիշյալ պայմանների մասին.

1. Ձվի վորակը — ճտահանման լավ ստացումը առաջին հերթին կախված է ինկուբատոր **դրվող** ձվի վորակից:

Յուրաքանչյուր ձվից չի կարելի ճուտ ստանալ: Միջին թվով 100 ձվից ստացվում է 60—70 ճուտ, վորոշ դեպքերում ճտահանումը հասնում է 80% -ի:

Ինկուբացիայի համար պիտանի ձուռն պետք է համապատասխանի հետեւյալ պայմաններին՝

1. Նորմալ մեծություն (միջին).

2. Ձևը — ուլալ և կանոնավոր.

3. Կճեպը պետք է լինի առանց ճեղքի, հավասար, հարթ, նորմալ հաստության և ծակոտիններով, բոլորովին մաքուր, չվացած և չսրբած:

4. Ձվի բութ մասում պետք է լինի շարժվող ո-

ղալին կամերա տասնհինգ կուպեկանոցից վոր մեծ.

5. Ձվերը 10 որականից հին չպետք է լինի, ամենից լավ համարվում է 5—7 որական ձուռն.

Ինկուբացիայի համար գործադրվող ձվերի հետ պետք է շատ զգուշ վարվել, փոքրիկ հարվածից նրանք անպետք են դառնում, շատ կեղտոտ ձվերը նույնպես պիտանի չեն ինկուբացիայի համար:

Դրսից ստացված ձվերն անմիջապես ինկուբատորի մեջ չի դրվում, պետք է 24 ժամ թողնել պարկած, վորպեսզի բոլոր մասերը նորմալ վիճակի մեջ լինի:

Ինկուբացիայի համար գործածվող ձվերն անհրաժեշտ է պահել 8—10 աստիճան ջերմության տակ ըստ Յելսիուսի և շենքի խոնավությունը պետք է լինի 60—70%:

Մի քանի որ պահվող ձվերը պետք է որը մեջ շուռ տալ, վորպեսզի սաղմը չկալի կճեպի տակի թաղանթին:

2. Շենքի ջերմությունը — Շենքերում (ինկուբատորիայում) պետք է պահպանել միապաղաղ ջերմություն և բավականի բարձր խոնավություն, հաշվի չառնելով դրսի ողի ջերմաստիճանի տատանումները: Ինկուբատորիան բնական լուսավորության (արևի) մեծ պահանջ չի զգում: Ելեկտրականության առկայության դեպքում, ինկուբատորիան կարելի չէ միանգամից զրկել բնական լույսից:

Ինկուբատորիայի ջերմությունը պետք է լինի 18—21 աստ. ըստ Յելսիուսի: Ջերմության տարբերությունը շենքի առաստաղի և հատակի մոտ, պետք է լինի 3—5 աստ. ըստ Յելսիուսի:

3. Ինկուբատորիայի վենտիլյացիան (ոգափոխու-

բյուներ). Ինկուբատորիայի ջերմության վրա ազդում է նաև ողափոխությունը, այնուամենայնիվ մեծ ողափոխության կարիք չկա, յեթե ջերմությունը 21 աստ. Ցել. ավել չէ:

4. Ինկուբատորի ներսի ջերմությունը. Ինկուբատորում պահանջվող նորմալ ջերմությունից է կախված հաջող ճտահանումը. ջերմաստիճանի փոքր տատանումը կորստաբեր է անդրադառնում ճտահանման վրա, միջին ջերմությունը համարվում է 37,5 աստ. ըստ Ցելսիուսի, ըստ վորում ինկուբացիայի տարբեր որերին տարբեր է լինում: Որինակ ըստ Ա. Ի. Յեգորովի կոն-ըստրուկցիայի փոքրիկ ինկուբատորների զործադրման դեպքում անհրաժեշտ է՝

1—4 որը — 38 աստ. ըստ Ցելսիուսի

5—10 » — 38,5 աստ. »

11—15 » — 39 աստ. »

16-րդ որից մինչև վերջը 37,5 աստ. »

Ինկուբատորի ներսի ողափոխությունը և խոնավությունը. Մի շարք ոպերատորների սխալը կայանում է նրանում, վոր նրանք հետևում են միայն ինկուբատորի կամերայի ջերմաստիճանին, իսկ ողափոխության և խոնավության խնդիրներին առանձին ուշադրություն չեն դարձնում:

Լավագույն ճտահանման համար, անհրաժեշտ է վորքան հնարավոր է ճիշտ սահմանել ու պահպանել ջերմաստիճանի և ողի խոնավության հարաբերությունը ինկուբատորի ներսում: Ինկուբատորներում մեծ շորություն նկատելու դեպքում ինկուբատորի տակ հատուկ ամանով 25 աստ. ըստ Ցել. գոլ ջոք են դնում: Ինկուբատորի խոնավությունը պետք է լինի 60--70%:

6. Չվերի շուռ տալը — Ինկուբացիայի առաջին որերին ձվերը չեն շուռ տալիս, 2-րդ որից շուռ են տալիս որեկան 6 անգամ, յուրաքանչյուր 4 ժամը մեկ անգամ այն ել ջերմաստիճանը ստուգելուց հետո: Ինկուբացիայի 18-րդ որը դադարեցնում են ձվերի շուռ տալը:

7. Չվերի կոնտրոլ ստուգումը (միւրած) — Ճտահանման բարձր տոկոս ստանալու խնդրում, խոշոր նըշանակություն ունի, ինկուբացիայի ընթացքում ձվերի կոնտրոլ ստուգման յենթարկելը. սրա կարևորությունը կայանում է նրանում, վոր ոպերատորը կարող է նկատել ինկուբացիայի շրջանում առաջ յեկած թերությունները և ալդպիսին ժամանակին վերացնել: Այս իսկ նպատակով ինկուբացիայի 5—7-րդ որը հատուկ մթնացրած սենյակում, կամ ինկուբատորիայում (փակելով լուսամուտները վարագույրով) լապտերի կամ ովոսկոպի լույսի տակ նայում են ձվերը: Այս ձևով վորոշվում է սաղմի զարգացումը ձվի մեջ, վորով և հնարավոր է լինում նկատվող թերությունները վերացնելու և ապահովելու հաջող ճտահանումը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԻՆԿՈՒԲԱՏՈՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՅԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԱ-
ՍԻՆ

(Ա. Ի. ՅԵԳՈՐՈՎԻ 500—600 ՉՎԱՏԵՂԱՆՈՅ ԿՈՆՍՏԱՆ-
ԲՈՒԿՅԻԱՅԻ)

Այս տիպի ինկուբատորը առաջացվում է ջրով, վա-
ռելով ջրամանի տակ նավթի լապտեր: Ինկուբատորը
ունի ոցածև խողովակ միացած տաքացվող ջրի բակի
հետ. ինկուբատորը ծախսում է որեկան 1,4 կիլոգրամ
նավթ:

ՀԱՎԱՔՆԵԼԸ— Ինկուբատորն արկղից հանելուց հե-
տո, ամրացնում են նրա վռտքերը և ջրի բակը, վեր-
ջինս ամրացնելու ժամանակ մուֆտայի տակից հաղ-
ցընում են պակլյա (առանց վորի ջուրը կհոսի) և բա-
կը տեղավորում են այնպես՝ վոր նա կանգնի խիստ
ուղղաձիգ դրությամբ:

Ինկուբատորը կանգնեցվում է հարթաչափի (վա-
տերպասի) ոգնությամբ: Արլուների շրջանակները պետք
է կախվեն հատակին զուգահեռ և յեթե վորեւ կողմը
բարձր է պետք է շրջանակը իջեցնել մինչև հատակը և
ուղղել ժապավենը, շարժելով այդպիսին բարձրացնող
վալիկի միջոցով: Այնուհետև հավաքում ու կանոնա-
վորում են ջերմականության աստիճանը: Սրա ներքին մասում

կաշվե ողակին հագցնում են կապույտ, այնպես, վոր-
պետքի կանոնավորիչ պտուտակի շախնկան իրեն ծալ-
րով ընկնի կապույտի բնի մեջ:

Լծակի յերկար ուսի թեքումով, լապտերի անցքը
փակող կափարիչը դրվում է այնպես, վորպետքի ա-
մուր ծածկի անցքը, ըստ վորում կափարիչը պետք է
գերազանցի ծանրությանը:

ՏԱՔԱՅՆԵԼԸ— Ջրի բակը ամրացնելուց և ինկու-
բատորը կանգնեցնելուց հետո, լեկայի միջոցով բակի
մեջ լցնում են ջուրը (տաքացվելուս մոտավորապես
18 բաժակ), վորը պետք է տաք լինի: Ոճաճև խոշո-
վակի մեջ ջուրը պետք է այնչափ բարձրանա, վոր հա-
վասարվի լեկայի $\frac{3}{4}$ բարձրությանը:

Բակը ջուր լցնելուց հետո միայն պետք է վառել
լապտերը և կախել տեղը:

Ջերմության կանոնավորումը - Յերբ ինկուբատո-
րը լցված է ջրով ու լապտերը վառած, պետք է ստու-
գել նրա ջերմաստիճանը: Սա կատարվում է այնպես:
Լապտերի անցքը փակող կափարիչը կանոնավորիչ
պտուտակի ոգնությամբ բնդհուպ ամրացվում է: Յեթե
նախքան հարկավոր ջերմաստիճանի հասնելը, կափա-
րիչն անցքի վրայից բարձրանա, պետք է կանոնավո-
րիչ պտուտակի միջոցով նորից իջեցնել, այսպես պետք
է կրկնել այնքան ժամանակ, մինչև վոր ինկուբատորի
ներսում առաջանա անհրաժեշտ ջերմաստիճանը:

Յերբ ջերմաչափը ցույց կտա 38 աստ. ըստ Յելսիուսի,
այդ ժամանակ անցքը փակող կափարիչը կանոնավո-
րիչ պտուտակի պտույտով բարձրացվում է խողովակի
լեզրից 5 միլիմետրի չափով, վորից հետո ջերմականո-
նավորիչը սկսում է ավտոմատ կերպով աշխատել:

Զվերի ամանը բարձրացվում է հատակից $\frac{1}{4}$ վերև:

Խոնավություն— Զվերը խոնավացնում են պուլ-վերիգատորի միջոցով: Ինկուբատորում մեծ չորութունն ակտիվ դեպքում, ինկուբացիայի 15-րդ օրից ինկուբատորի տակ լրացուցիչ դրվում է 40 քառ. սանտիմետրանոց տափակ ամանով գուլ ջուր:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆՆ ԸՍՏ ՅԵԼՍԻՈՒՍԻ

Ինկուբացիայի 1—4 օրը — 38 աստ.

» 5—10 » — 38,5 աստ.

» 11—15 » — 39 աստ.

» 16 օրից մինչև վերջ — 37,5 աստ.

Իսկականի հետ Շ Ի Շ Տ Ե՝ Գ. ՅԵԴԻԳԱՐՅԱՆ

ՃՏԵՐԻ ԱՃԵՑՈՒՄԸ

ՀԱՄԱՍԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱ-
ՀԱՆԴԵՍԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՊՈԼՏԱՎԱՅԻ ՄԱՐԶԻ
„ԲՈԼՇԵՎԻԿ“ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹԻՉՆԱԲՈՒԾԱ-
ԿԱՆ ՖԵՐՄԱՅԻ ՓՈՐՁԸ

Պոլտավայի մարզի «Բոլշևիկ» կոլտնտեսության թռչնաբուծական ֆերման իրեն բարձր արտադրական ցուցանիշներով— ձվատվությամբ, մատղաշների խոնամքի ու աճեցման և թռչունների տոհմային վորակով, Խորհրդային Ուկրաինայի թռչնաբուծական ֆերմաների մեջ բռնում է (գրավում է) առաջին տեղը:

Թռչնաբուծական ֆերման կազմակերպվել է 1935 թ.:

1940 թվին ֆերման կոմպլեկտավորել են 500 զբլուխ սպիտակ լեզգորն ցեղի հավերով:

Յուրաքանչյուր ձվատու հավից 1937 թ. միջին թվով ստացել են 202 ձու, 1938 թ.— 210 ձու և 1939 թ.— 218 ձու:

Լավագույն ցուցանիշներ ունեն նաև մատղաշների պահպանման գործում: 1937 թ. ֆերման և ներմուծվել աճեցման համար 888 հատ ձուտեր, վորոնցից աճեցվել է 848 հատ, այսինքն պահպանել են 95,5 տոկոսը:

1938 թ. ֆերման ստացել է թռչնաբուծական ինկու-

բատորային կայանից 1000 հատ ճուտեր, վորոնց պահպանել են 99%-ով:

1939 թվին ստացված 1500 ճուտերից պահպանել և աճեցրել են 98%: Յուրաքանչյուր տարի աճում է կուսնտեսություն յեկամուտը թռչնաբուծությունից.— 1937 թ. ֆերման յեկամուտ է տվել 17000 ոտբլի, 1939 թ.՝ 33.000 ոտբլի:

Ֆերմայի կազմակերպման որից կանոնավորել են թռչունների տոհմային աշխատանքները. բոլոր հավերին համարակալել են, հազցնելով վորտքերին ողակներ, տարվում է ձվատվության կոնտրոլ հաշվառում: կոնտրոլ բների (բացվող դռների) միջոցով ապահովել են յուրաքանչյուր հավի ձվատվության հաշվումը: Ամեն որ ձվատվության նշումը կատարվում է ամսական մատչանում և ալդպիսով յուրաքանչյուր հավի մթերատվության հաշվառումը տարվում է ըստ ամիսների և ամբողջ տարվա ընթացքում: Բացի ալդ ֆերմայում կատարում են ձվերի կշռում: Ձվատվության հաշվառման և ձվի կշռի տվյալներով, թռչնաբուծական ֆերման յուրաքանչյուր տարի կոմպլեկտավորում է մայրական հոտը, լավագույն ու բարձր ձվատվություն ունեցող ընտրված հավերով: Ինկուբացիայի համար ընտրում են միմիայն բարձր մթերատվություն ունեցող հավերի ձվերը և ուղարկում թռչնաբուծական ինկուբատորային կայան, վորտեղից և ֆերման ստանում է մեկորեկան հասակի ճուտեր:

Թռչնաբուծական ինկուբատորային կայանից ճուտերին փոխադրում են ֆերմա ֆաներայից հատուկ պատրաստված արկղներով, յուրաքանչյուրում 100-ական հատ: Ֆերմայի ճուտերի դաստիարակումը բրուդերհաու-

զի (արհեստական թխսի) տակ կատարվում է հատուկ հարմարեցված խրճիթում: Ձմռան ընթացքում այս շենքում պահում են թռչունների մայրական հոտը, և սաքովյունը ընկնելու դեպքում դրանց փոխադրում են մարագ կամ միայլ հով շենք: Նախքան ճուտերի փոխադրումը ֆերման վաղորոք նախապատրաստում են բրուդեր-հաուզը, վորի շենքի հատակի կավի վերին շերտը քերում են ու դուրս թափում, ու տեղը նորից սվաղում թարմ կավով:

Շենքի դռների և հատակի ախտահանումը կատարվում է լապտերով բոցակիզման միջոցով և սպիտակեցնելով շենքը ներսից ու դրսից:

Ամբողջ շենքը մի քանիս ր լավ ողափոխում և չորացնում են: Ֆերմայի ամբողջ ինվենտարը և կահավորումը ախտահանում ու լվանում են: Բրուդերհաուզի շրջապատը նույնպես մաքրում են աղբից և ալդպիսին դաշտ փոխադրում: Բրուդերհաուզի տակ ճուտերին տաքացնելու համար, պատրաստված է աղյուսից յերկու յերկար պարկեցրած վառարաններ: Սրանց առավելությունը կայանում է նրանում, վոր տաքացվում են տեղական վառելանյութերով և պահպանում են մշտական ջերմություն: Վառարանի պատերի յերկու կողմից ամրացվում են ֆաներաներ, վորոնց տակ և տեղավորվում են ճուտեր: Բրուդեր-հաուզի տակը ամբողջությամբ փռվում է ցամաքարով, լավ է մղեղով 1—2 սանտիմետր հաստությամբ: Ֆաներների տակ, վորտեղ գիշերում են ճուտերը, ցամաքը պետք է փռել ավելի հաստ շերտով: Ջերմությունը բրուդերի տակ առաջին որերին պահպանում են 33 աստ. ըստ Ֆելսիուսի և ճուտերի աճեցման հետ միասին աստիճանաբար իջեց-

վում է ջերմաստիճանը: Ճտերի 30—40 որեկան հասակում ջերմաստիճանը իջեցվում է մինչև 20—22 աստ:

Ճտապահ-ստախանովական ընկ. ընկ. Դեգտեա-բենկոն և Վովկը ուշադիր կերպով հսկում են հարկ չեղած ջերմության պահպանման վրա: Ճտերի վարքը—հանդիսանում է ջերմաստիճանի լավագույն ցուցանիշը. յերբ Ճտերը ուրախ են ու աշխուժ, խաղում են կամ նստում են առանց կուշ գալու, նշանակում է վոր իրենց լավ են զգում: Յեթե Ճտերը նստում են կուշ չեկած և ծլվում են (աղմկում) դա նշան է, վոր դրանք մրսում են: Բարձր ջերմաստիճանի տակ Ճտերը փրզվում են հատակին, բացում են կտուցները և ծանր շնչում: Ճտերի խոտանումը և տեսակավորումը ֆերմայում կատարում են հետևյալ կերպ՝ ընկ. Դեգտեա-բենկոն առաջին տեսակավորումը կատարում է թրոշնաբուժական ինկուբատորային կայանում Ճտերի ընդունման ժամանակ: Թույլ և չձգված փորով և փորը կապտած Ճտերին նա չի ընդունում: Ճտերին ըստ իրենց ֆիզիկական զարգացման, պահում են առնաձին վոշ մեծ խմբերով: Թույլ և վատառողջ Ճտերին առանձնացնում են հատուկ սեկցիայում, վորտեղ և կերակրում են առանձին: Թռչնաբուժական ինկուբատորային կայանից բերված Ճտերին տեղավորում են բրդադերների տակ և հենց վոր նրանք տաքանում են, սկսում են նրանց կերակրել:

Ճտերի դաստիարակման առաջին որերին, նրանց կերակրում են որեկան 8 անգամ և Ճտերի մեծանալու հետ միասին կերակրելու քանակը աստիճանաբար պակասեցվում է հասցնելով որեկան 4 անգամի: Կերա-

կըրման առաջին որերին Ճտերին տալիս են կորեկ, ցորենի և դարու չոր կրուպա. 4 որեկան հասակում տալիս են մածուն և նաև կանաչ կեր (մանր կտրած յեղինջ): Աստիճանաբար կերաբածնի (ռացիոնի) մեջ մտցնում են յեգիպտացորեն, քուսպ, խաշած կարտոֆիլ, կավիճ, գորտի Ճտեր և այլն: Մեկ ամսական հասակում, Ճտերին տալիս են նույն կերերը, ինչ վոր հասակավոր թռչուններին, միայն թե ջարդված վիճակում: 2½ ամսական հասակից հատիկային կերերը տալիս են չջարդված վիճակում: Կերակրում են Ճտերին սովորական նեղ տաշտակներում, վորոնք ունեն 3 սանտիմետր խորություն և 1—1,5 մետր յերկարություն: Ձերման այդպիսի տաշտակներ ուն յերկու հերթափոխության համար և այս հանգամանքը հնարավորություն է տալիս անընդհատ կերակրելու և մշտական ախտահանելու ինվենտարը: Յուրաքանչյուր կերակրելուց հետո, կերամանները մաքրում են կերերի մնացորդներից, լվանում են և արևի տակ չորացնում: Յուրաքանչյուր չորս որը մի անգամ տաշտակները կրթով ախտահանում են:

Ճտերին՝ կյանքի առաջին որերին վորպես ջրամաններ գործադրում են սովորական թելի ափսեները, վորոնց վրա դրվում են ջրով կամ մածնով լցված ապակյա բաժակներ հակառակ դիրքով (հատակը վեր): Ավելի մեծահասակ Ճտերի համար սովորաբար գործադրվում է ավտոմատ ջրամաններ:

Հավ արևոտ յեղանակներին Ճտերին աստիճանաբար դուրս են բերում և սովորեցնում են արևի տակ զբոսնելուն, վորի համար բրդադերհառվի մոտ կառուցում են ցանկապատած հրապարակ):

Ճտերին 3 շաբաթական հասակից սովորեցնում են
թառ բարձրանալուն:

Ճտերին բրուդերհաուզում 45 որ պահելու ժամա-
նակաշրջանում ճտապահերը 24 ժամ անընդհատ հըս-
կում են նրանց և վորից հետո ունենում են հատուկ
դիշերապահ: Մատղաշները պահվում են առանձին և
հասակավոր թռչուններից մեկուսացած:

Աքաղաղներին 1,5—2 ամսական հասակից ա-
ռանձնացնում են վառեկներից և պահվում են բակում
առանձին: Աքաղաղներին 2,5—3 ամսական դառնալուց
հետո (բացառությամբ 12—15%-ից), վաճառում են
այլ կոտնտեսություններին վորպես տոհմային արտա-
դրողներ: Աշնանը ֆերմայում թողնված 12—15% ա-
քաղաղներից ընտրում են լավագույններին և պահում
են ֆերմայի համար: Առողջ, աճեցրած, ամուր և լավ
զարգացած մատղաշները վճռում են ֆերմայի աշխա-
տանքների հաջողությունը. 5 ամսական մատղաշները
աշնանը անցնում են հոտի լրացմանը, վորոնք գալիք
տարում ապահովում են վաղ ձվատվությունը և տալիս
են մաքսիմալ պրոդուկցիա (ձու):

Այս արժանի ֆերման 1940 թ. մասնակցում է
Միութենական գ. տ. ցուցահանդեսին, վորը լայնորեն
ցուցադրվելու չե «թռչնաբուծություն» պամիլիոնում:



3240
40

ՀՀ Ազգային գրադարան



NL0293872

22.490

ИНСТРУКЦИЯ

По инкубации и выращиванию цыплят

Издание Наркомзема Арм. ССР

Ереван—1940